

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 37/15

ք.Երևան

29 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ «ՍԵՐԺ» ԱԿ-ի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

«ՍԵՐԺ» ԱԿ-ն մշտապես աշխատել է շրջանառության հարկի դաշտում, սակայն որոշ հանգամանքների պատճառով բողոքաբերը չի կարողացել ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

«ՍԵՐԺ» ԱԿ-ի կողմից ներկայացվել է շրջանառության հարկի 1-ին եռամսյակի հաշվետվությունը և ժամանակին կատարվել վճարումները: «ՍԵՐԺ» ԱԿ-ի շրջանառությունն այնքան փոքր է, որ չի կարող աշխատել ԱԱՀ-ի հարկման դաշտում:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրում է թույլ տալ աշխատել շրջանառության հարկի դաշտում:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«ՍԵՐԺ» ԱԿ-ն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել 14.01.1995թ.:

«ՍԵՐԺ» ԱԿ կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեգիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային

տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև քվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Քննարկվող դեպքում «ՍԵՐԺ» ԱԿ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Միննույն ժամանակ, դիմում-բողոքում չի ներկայացվել այլ հիմնավոր փաստարկ (ապացույց)՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից, Հանձնաժողովը գտնում է, որ «ՍԵՐԺ» ԱԿ-ն 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող չի կարող համարվել:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ՍԵՐԺ» ԱԿ-ի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Ռ. ՄԱՇԱԴՅԱՆ

